ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 18 սեպտեմբերի 2012թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Վ. Պողոսյանի
Անդամակցությամբ՝ Կ. Բալայանի
Ֆ. Թոխյանի

Ուսումնասիրելով քաղաքացի Նորա Էվոյանի անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացի Նորա Էվոյանը 27.08.2012թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով քննության առնել եւ որոշել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 412-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Գործն ըստ էության լուծող դատական ակտերի դեմ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում» դրույթի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասի, 6-րդ հոդվածի 2-րդ մասի, 18 եւ 19-րդ հոդվածների 1-ին մասերի եւ 20-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին:

Դիմողը նաեւ միջնորդություն է ներկայացրել սահմանադրական դատարանին՝ մինչեւ դատաքննության ավարտը կասեցնել վիճարկվող նորմի գործողությունը, քանի որ այն կարող է հանգեցնել ծանր հետեւանքների:

Անհատական դիմումի նախնական ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ դիմողը պահպանել է ՀՀ սահմանադրական դատարան դիմելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով սահմանված պայմանները, այն է՝

- դիմումում առաջադրված հարցերը ենթակա են սահմանադրական դատարանին,
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում,
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,
- դիմողն սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31, 32 եւ 69-րդ հոդվածների պահանջներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. Քաղաքացի Նորա Էվոյանի դիմումի հիման վրա՝ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 412-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Գործն ըստ էության լուծող դատական ակտերի դեմ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում» դրույթի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել քննության:

2. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

3. Սահմանադրական դատարանի աշխատակարգային նիստում անդրադառնալ դիմողի միջնորդությանը:

Նախագահող՝

Անդամներ՝

18 սեպտեմբերի 2012 թվականի
ՍԴԴԿՈ/2-16